ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ

ՀՐԱՆՏ ԲԱԴՐԱՏՅԱՆ, ՀԱԿՈԲ ՄԱՐՈՒԹՅԱՆ, ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ

ՍՍՀՄ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտին ուղղված ՍՄԿԿ Կենտկոմի 1984 թ. փետրվարյան որոշման մեջ շեշտվեց սոցիալիզմի առավելությունների հետ գիտատեխնիկական առաջընթացի (ԳՏԱ) նվաճումները միացնելու, տեսական պրոբլեմների հետազոտություններն ընդլայնելու անհրաժեշտությունը։ ԳՏԱ-ի տեսական պրոբլեմներին են նվիրված սովետական տնտեսագետների բազմաթիվ աշխատություններ։ Դրանցում մեծ ուշադրություն է նվիրվել ԳՏԱ-ի և նրա ժամանակակից ձևի՝ գիտատեխնիկական հեղափոխության (ԳՏՀ) էությանը, դրանց պլանավորման ու կառավարման հարցերին, զարգացման ուղղություններին և հեռանկարներին, ԳՏԱ-ի պայմաններում սոցիալիզմի տնտեսական օրենքների ու կատեգորիաների գործողությանը և այլն։

ԳՏԱ-ն սոցիալ-տնտեսական բարդ պրոցես է, որն իր զարգացման ընթացքում ընդունում է նորանոր ձևեր։ Այս հանգամանքն անհրաժեշտ է դարձնում ԳՏԱ-ի ուսումնասիրության մեթոդոլոգիայի անընդհատ կատարելագործումը, այդ պրոցեսում նոր երևույթների ժամանակին բացահայտումը և բնութագրումը։ Այդ կապակցությամբ հետագա կոնկրետացման կարիք են զգում գիտության անմիջական արտադրողական ուժի վերածվելու, գիտության և նյութական արտադրության ոլորտների միջև տնտեսական հարաբերությունների բնույթի, ԳՏԱ-ի և նրա ժամանակակից ձևի՝ ԳՏՀ-ի էության վերաբերյալ տեսական հարցերը։ Հարկ է նշել, որ տնտեսագետները տարբեր կերպ են մոտենում գիտությանը, որպես անմիջական արտադրողական ուժի։ Համաձայն ամենատարածված և ընդունված տեսակետի, հասարակության մեջ գիտության անմիջական արտադրողական ուժի վերածման էությունը այն է, որ գիտությունը վերածվում է արտադրողական ուժերի լրացուցիչ տարրի, արտադրության միջոցների հետ մեկտեղ հանդես է գալիս որպես արտադրության մասնակից[1]։ Ընդ որում, այս տեսակետը պաշտպանող տնտեսագետների մեծ մասը, սովորաբար վկայակոչելով Կ. Մարքսի խոսքերը, որ «հիմնական կապիտալի զարգացումը համադիսանում է այն բանի ցուցանիշը, թե ինչ աստիճանի է համընդհանուր հասարակական գիտելիքը (Wissen, knowledge) *վերածվել անմիջական արտադրողական ուժի»[2], գիտության վերածումը արտադրողական ուժի ներկայացնում է որպես նոր (կամ կատարելագործված) արտադրողական տեխնիկայում գիտության արդյունքների նյութականացում[3]։ Լ. Գատովսկու կարծիքով՝ արտադրողական պետք է համարել գիտության միայն այն մասը, որի արդյունքներն իրացվում են արտադրությունում և ունեն կիրառական նշանակություն[4]։ Այս տեսակետի կողմնակիցների մի մասը կարևորագույնը համարում է գիտության ներգործության հետևանքով նյութական արտադրության տեխնոլոգիայում տեղի ունեցող փոփոխությունները[5]։ Մյուսներն ընդգծում են արտադրական*

---

1 «Экономическая энциклопедия. Политическая экономия», т. 3. М., 1979, с. 36.

2 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 46, ч. II, с. 215.

3 «Известия АН СССР. серия экономическая», 1980, № 5, с. 17.

4 Л. М. Гатовский, Научно-технический прогресс и экономика развитого социализма, М., 1974, с. 171—175, 187—189.

5 «Вопросы экономики», 1969, № 8, с. 35; О. Б. Сулейманов, Технология как объект изучения политэкономии, Тюмень, 1975, с. 69—79; «Вопросы экономики», 1976, № 10, с. 21—22.

մեքենաների կառավարման ձևերում տեղի ունեցող փոփոխությունները[6]։ Ոմանք էլ (հատկապես քիմիկոսները) կարևորագույնն են համարում նոր նյութերի հայտնաբերումը և օգտագործումը, էներգիայի աղբյուրներում տեղի ունեցող փոփոխությունները և այլն[7]։

Մեր կարծիքով, ԳՏԱ-ի էության բացահայտումը կապված է գիտությունն արտադրողական ուժի վերածվելու մեխանիզմը գիտակամորեն ճիշտ մեկնաբանելու հետ։ Սակայն անբավարար պետք է համարել վերը նշված հեղինակների կողմից գիտության դերի սահմանափակումը միայն արտադրության վրա նրա ունեցած ներգործությամբ։ Առավել ևս, որ գիտության հանդեպ նրանք կիրառում են վերջինիս համար նեղ նյութական արտադրության կատեգորիաները և հասկացությունները։ Նշված հեղինակներն արտադրության պահանջներին են ենթարկում գիտությունը, որը դրանով իսկ ըստ էության կորցնում է իրեն հատուկ ճանաչողական ֆունկցիաները։ Չնվազեցնելով նյութական արտադրության դերը գիտության զարգացման գործում, չպետք է, այնուհանդերձ, տեսադաշտից բաց թողնել բուն գիտության է՛լ ավելի էական և ինքնուրույն դերն արտադրության զարգացման գործում։

Կ. Մարքսը, ուսումնասիրելով գիտության զարգացման պրոցեսը, նշել է, որ գիտությունը դառնում է ոչ միայն արտադրողական պրոցեսի նկատմամբ գործոն, այլև, առավել ևս, տեղի է ունենում անմիջական աշխատանքից գիտության տարանջատում։ «Առաջին անգամ,—գրել է նա,—դրվում են գործնական պրոբլեմներ, որոնց լուծումը հնարավոր է միայն գիտականորեն, միաժամանակ տեղի է ունենում գիտության տարանջատում անմիջական աշխատանքից»[8]։ Ընդհանրապես գիտությունը բնորոշ է արտադրության նկատմամբ առաջանցիկ զարգացում և այդ պատճառով էլ նրա ֆունկցիաները չի կարելի սահմանափակել միայն արտադրության վրա ունեցած ներգործությամբ։ Բացի այդ, գիտության համընդհանուր նյութականացման տեսակետը պաշտպանող տնտեսագետների կողմից Կ. Մարքսի խոսքերի վկայակոչումը տեղին չէ, քանի որ նա այդտեղ խոսում է գիտության «նյութականացման ցուցանիշի» մասին, մանավանդ, որ իր միտքը շարունակում է այսպես. «այստեղից էլ այն բանի ցուցանիշը, թե որքանով են հասարակական կենսագործունեության պայմանները ենթարկված համընդհանուր ինտելեկտի վերահսկողությանը և վերափոխված ըստ վերջինի պահանջների»[9]։ Եվ, ընդհանրապես, նշել է Կ. Մարքսը, «հոգևոր և նյութական արտադրությունների կապի ուսումնասիրության համար ամենից առաջ անհրաժեշտ է նյութական արտադրությունը դիտարկել ոչ թե որպես համընդհանուր կատեգորիա, այլ որոշակի պատմական ձևում»[10]։

Մեր կարծիքով, ճիշտ չէ գիտության զարգացումը կապել միմիայն նյութական արտադրության պահանջների հետ։ Չէ որ գիտությունն ինքը բաղում հոգևոր բարիքների արտադրողն է, բարիքներ, որոնք բավարարում են հասարակության ինտենսիվորեն աճող հոգևոր պահանջմունքները, անմիջական «ելք» չտանալով դեպի նյութական արտադրություն։ Ճիշտ է, շատ հոգևոր պահանջմունքներ իրենց զարգացման մեջ կարող են վերածվել նյութականի, սակայն այս հանգամանքը պետք է քննել ելնելով գիտության և նյութական արտադրության միջև փոխհարաբերության առանձնահատկությունից։ Յուրաքանչյուր տվյալ պահի գիտությանը բնորոշ է գնալով աճող մասսայի հոգևոր բարիքների արտադրությունը։ Նշված բարիքների հասարակական գը-

---

6 А. П. Кудряшов, А. В. Безруков, Научно-техническая революция и экономический прогресс, М., 1981, с. 25.

7 Նույն տեղում, էջ 21—24։

8 К. Маркс, Машины. Применение природных сил и науки («Вопросы истории естествознания и техники», 1968, № 25, с. 75—76).

9 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 46, ч. II, с. 215.

10 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 26, ч. I, с. 279.

նահատականը հնարավոր չէ տալ դրանց համար նեղ նյութական արտադրության հասկացություններով և կատեգորիաներով։

Այսպիսով, գիտության վերածումն անմիջական արտադրողական ուժի չպետք է պատկերացնել միայն որպես գիտության նվաճումների նյութականացում։ Մ. Քոթանյանն իրավացիորեն նշում է, որ «գիտության վերածումն անմիջական արտադրողական ուժի հարկավոր է հասկանալ հարաբերականորեն, որպես գիտության վերածում արտադրողական ուժերի անմիջական զարգացման և կատարելագործման գլխավոր ու վճռորոշ միջոցի»[11]։ Այս կապակցությամբ համոզիչ չեն այն պնդումները, թե մարքսիստական տեսանկյունից գիտության, տեխնիկայի և էկոնոմիկայի միասնությունը պետք է դիտարկել նյութական արտադրության առաջանցիկ մշանակության ֆոնի վրա[12]։

Ինչպես նշվեց, գիտությունն անմիջական արտադրողական ուժի վերածման մեխանիզմի բացահայտումը ԳՏԱ-ի էությունը ճիշտ բնութագրելու մեթոդաբանական հիմքն է։ Տնտեսագիտական գրականության մեջ կարելի է հանդիպել ԳՏԱ-ի բազմաթիվ բնորոշումների։ Հեղինակների մեծ մասը հարցի նկատմամբ մեթոդապես ճիշտ մոտեցում է ցուցաբերում և ԳՏԱ-ի էությունը բնորոշում է՝ ելնելով գիտությունն արտադրողական ուժի վերածվելու մեխանիզմից։ Սակայն գիտության նման փոխակերպումը ներկայացնելով որպես սոսկ գիտական արդյունքների նյութականացում, նրանք ԳՏԱ-ն ի վերջո ներկայացնում են որպես «գիտություն—տեխնիկա—արտադրություն» ցիկլի իրացման պրոցես։ Մ. Վիլենսկու կարծիքով՝ ԳՏԱ-ն մի պրոցես է, որտեղ «հասարակության արտադրողական ուժերի կատարելագործումը տեղի է ունենում գիտության և տեխնիկայի նվաճումների օգտագործման հիման վրա, որոնք հասարակության առջև դրված սոցիալական, ինչպես նաև տնտեսական խնդիրները լուծում են հանրային արտադրության արդյունավետությունը բարձրացնելու միջոցով[13]»։ Ս. Գոլոսովսկին և Բ. Գրինչելը պընդում են, որ ԳՏԱ-ն «նոր գիտելիքների, տեխնիկայի, տեխնոլոգիայի, նյութերի և հասարակական պրոցեսների կազմակերպման և կառավարման մեթոդների պլանաչափ ստեղծումն ու օգտագործումն է կենսագործունեության բոլոր ոլորտներում, դրանց տարածումը պայմանների թեթևացման և բարելավման, ինչպես նաև ֆիզիկական ծանր աշխատանքի վերացման, բնակչության կրթական մակարդակի և աշխատողների որակավորման բարձրացման, կենսամակարդակի աճի և հասարակության անդամների համակողմանի զարգացման նպատակներով[14]»։ Նույն տեսակետն է պաշտպանում նաև Ֆ. Դրոնովը[15]։ Լ. Գատովսկու կարծիքով «ԳՏԱ-ն սոցիալիզմի պայմաններում հասարակության բոլոր անդամների կենսամակարդակի աճի և համակողմանի զարգացման նպատակներով արտադրության անընդհատ որակական նորացման, այդ նպատակին ծառայող նոր գիտելիքների ստեղծման ու յուրացման պլանաչափ, ժողովրդական տնտեսության մասշտաբով իրացվող պրոցես է»[16]։

Նման մոտեցումների թերությունն այն է, որ տեսադաշտից բաց է թող-

---

11 М. Х. Котанян, Экономическое стимулирование научно-технического прогресса, Ереван, 1975, с. 84.

12 С. И. Голосовский, Влияние научно-технического прогресса на рост эффективности общественного производства (методология оценки и анализа), (диссертация на соискание ученой степени доктора экономических наук), М., 1979, с. 32.

13 М. А. Виленский, Методические основы показателей планирования НТП (Тезисы докладов на всесоюзной конференции по проблеме совершенствования планирования и оценки эффективности НТП), М., 1972, с. 8.

14 «Известия АН СССР, серия экономическая», 1978, № 4, с. 20.

15 «Экономические основы ускорения научно-технического прогресса», Минск, 1980, с. 13.

16 Л. М. Гатовский, Научно-технический прогресс и экономика развитого социализма, М., 1974, с. 7—8.

նրվում ԳՏԱ-ում գիտության առաջատար դերը։ Ընդ որում, չի կարելի չնշել ԳՏԱ-ում գիտության ելակետային և վճռորոշ նշանակությունը։ Ինչպես նշում է Ս. Խեյնմանը, ԳՏԱ-ի ժամանակ «գիտական հեղափոխությունը ձուլվում է տեխնիկականի հետ՝ գիտության առաջանցիկ զարգացման և առաջատար պայմաններում»[17]։ Հետևաբար, ճիշտ չէ ԳՏԱ-ում գիտության ֆունկցիոնալ նշանակությունը սահմանափակել արտադրողական պահանջմունքների բավարարմամբ։ ԳՏԱ-ի դարաշրջանում գնալով մեծանում է գիտության դերն ու նշանակությունը հոգևոր և նյութական պահանջմունքների անմիջական բավարարման գործում։ Դա պայմանավորված է նաև նրանով, որ նյութական պահանջմունքները, ունենալով զարգացման հարաբերական կայունություն և բավարարման որոշակի սահմաններ, հոգևոր պահանջմունքների նկատմամբ նվազող բնույթ են ստանում։ Վերջիններս առանձնանում են բազմանշանակությամբ, բազմատեսակությամբ, անկրկնելիությամբ և որակական բազմակիությամբ։ Առավել ցայտուն է դրսևորվում այն միտումը, ըստ որի ԳՏԱ-ի դարաշրջանում մարդու մտավոր զարգացումը զգալիորեն գերազանցում է ֆիզիկականին. մի հանգամանք, որն առաջին հերթին ազդում է հոգևոր և նյութական պահանջմունքների փոխհարաբերության դիալեկտիկայի վրա։ Ասվածի հաստատումն է նաև այն անժխտելի փաստը, որ նյութական պահանջմունքների բավարարումը, նյութական արտադրության վրա գիտության ինտենսիվ ազդեցության հետ կապված, սկսում է կրել ցայտուն արտահայտված սոցիալական բնույթ և տիրապետող է դառնում դրանց որակական աճը։

Մյուս կողմից, ԳՏԱ-ի վերը նշված բնորոշումների թերությունն այն է, որ, ԳՏԱ-ն ներկայացնելով որպես «գիտություն-տեխնիկա-արտադրություն» ցիկլի իրացման պրոցես, հեղինակներին չի հաջողվում համոզիչ ցույց տալ ԳՏԱ-ի տեղն ու ժամանակը մարդկային հասարակության մեջ։ Չէ որ, եթե ԳՏԱ-ն գիտության կողմից տեխնիկական միջոցների ստեղծումն ու կիրառումն է արտադրության մեջ, ապա կարելի է պնդել, որ ԳՏԱ-ն որպես սոցիալ-տնտեսական երևույթ բնորոշ է եղել մարդկային հասարակությանը՝ նրա զարգացման բոլոր փուլերում։ Պատահական չէ, որ շատ հեղինակներ, փորձելով տալ ԳՏԱ-ին բնորոշ չափանիշները (մասնավորապես, որպեսզի հիմնավորեն ԳՏԱ-ի և XIX դարի արդյունաբերական հեղաշրջման միջև եղած տարբերությունը), այն բաժանում են ոչ էական, հաճախ էլ ձևական փուլերի։ Այսպես, Վ. Կամանն առաջարկում է ԳՏԱ-ի դիտանախապատրաստական, ժամանակակից տեխնիկական վերակառուցման և խոշոր ավտոմատացված մեքենայական արտադրության փուլերը[18]։ Ա. Կուդրյաշովը և Ա. Բեզրուկովն առաջարկում են հետևյալ փուլերը՝ 1) առանձին աշխատանքային օպերացիաների, տեխնոլոգիական պրոցեսների, հանգույցների, ագրեգատների, տեղամասերի ավտոմատացման, 2) արտադրամասերի և տեղամասերի ավտոմատացման, 3) արդյունաբերության և ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի ավտոմատացման[19]։ Գիտության նյութականացման տեսանկյունից ԳՏԱ-ի բաժանումն առանձին փուլերի որոշակի հետաքրքրություն է ներկայացնում և ունի մեթոդական նշանակություն։ Սակայն գիտության ներգործությունը նյութական արտադրության վրա այնքան բարդ և բազմազան է, որ միանգամայն տեղին են նաև բաժանումներն ըստ արտադրության տեխնոլոգիայի փոփոխության, բանվորական մեքենաները և տարքավորումները շարժման մեջ դնելու եղանակների, էներգիայի ստացման ձևերի և այլն։ Հետևաբար, նշված հիմունքներով ԳՏԱ-ի բնորոշումը և փուլերի բաժանումը

---

[17] С. А. Хейнман, Научно-техническая революция сегодня и завтра, М., 1977. с. 84.

[18] «Современная НТР: экономические формы и закономерности», М., 1972, с. 78.

[19] А. П. Кудряшов, А. В. Безруков, НТР и экономический прогресс, М., 1981, с. 29.

համոզիչ չեն։ Առավել ևս, որ արտադրական տեխնիկայում և տեխնոլոգիայում նշված փոփոխությունները ԳՏԱ-ի հետևանքն են և վերջինիս էությունը դրանցով բացատրելը մեթոդաբանական սխալ է։

Մեր կարծիքով, ԳՏԱ-ի յուրաքանչյուր բնորոշում, որը հիմնված է գիտության նյութականացման թեզի վրա և անտեսում է նրա դերը հոգևոր պահանջմունքների բավարարման գործում, ինչպես նաև հաշվի չի առնում հասարակության մեջ և, մասնավորապես, նյութական արտադրության մեջ աշխատանքի բնույթում տեղի ունեցող փոփոխությունը, գիտության պարզ էկոնոմիզացում է։ Այս առումով հետաքրքիր է Ա. Ախմեդուևի տեսակետը։ Ըստ նրա, «ԳՏԱ-ն նոր գիտելիքների արտադրության և հների խորացման պրոցես է և, կուտակված գիտելիքների հիման վրա, ամբողջ ժողովրդական տնտեսության կատարելագործումն ու զարգացումը։ ԳՏԱ-ն բազմակողմանի երևույթ է և իրագործվում է ինչպես բուն աշխատանքի պրոցեսում (մեթոդներում), առարկաներում և արդյունքներում, այնպես էլ նյութատեխնիկական բազայում որակական փոփոխությունների ձևով»[20]։ Ա. Ախմեդուևը շեշտում է նաև՝ ոչ արտադրական ոլորտում տեղի ունեցող հեղաշրջումը[21]։ Հետաքրքիր է նաև ԳՏԱ-ի հետևյալ բնորոշումը. «ԳՏԱ-ն տվյալ պատմական ժամանակաշրջանում հասարակության առջև դրված սոցիալ-տնտեսական և քաղաքական խնդիրների գործնական լուծման նպատակով հասարակական արտադրության և սպասարկման ոլորտի բոլոր կողմերի անընդհատ կատարելագործումն է, պայմանավորված տնտեսական օրենքների գործողությամբ, հիմնված գիտության և տեխնիկայի նվաճումների համատարած օգտագործման վրա»[22]։ Վերջին երկու բնորոշումների թերությունն այն է, որ առաջին դեպքում չի շեշտվում գիտության աճող դերը հոգևոր պահանջմունքների բավարարման գործում, իսկ երկրորդ դեպքում՝ գիտության առաջատար և վճռորոշ նշանակությունը ԳՏԱ-ում։

Ելնելով վերը նշվածից, սոցիալիզմի օրոք ԳՏԱ-ն դիտարկում ենք որպես հասարակության անդամների զարգացող հոգևոր և նյութական պահանջմունքների բավարարմանն ուղղված սոցիալ-տնտեսական բարդ պրոցես, որտեղ արտադրության արդյունավետության ու նյութատեխնիկական բազայի բարձրացման, ինչպես նաև հոգևոր ու նյութական բարիքների անմիջական ստեղծման գործում առաջատար դերը պատկանում է գիտությանը։ ԳՏԱ-ի էության նման մեկնաբանումը ենթադրում է տնտեսական որոշ կատեգորիաների նկատմամբ եղած պատկերացումների արմատական վերանայում։ Խնդիր չդնելով դրանք առանձին-առանձին քննելու, կանգ առնենք մեր կարծիքով առավել հիմնականի՝ հասարակական աշխատանքի բնույթում տեղի ունեցող փոփոխության վրա։ Վերջինիս էությունն այն է, որ հասարակական աշխատանքն ընդունում է ստեղծագործական բնույթ։ Ըստ որում, դա վերաբերվում է ոչ միայն բուն գիտության, այլև մյուս ոլորտներում (այդ թվում նաև նյութական արտադրության) կիրառվող կենդանի աշխատանքին։ Բավական է նշել, որ 1940—1982 թթ. ընթացքում մեր երկրում գիտաշխատողների թիվն ավելացել է 14,6 անգամ, մինչդեռ ժողովրդական տնտեսության մեջ աշխատողներինը՝ ընդամենը 3,4 անգամ։ Այդ նույն ժամանակամիջոցում գիտաշխատողների տեսակարար կշիռն աշխատողների ընդհանուր թվում 0,29-ից հասել է 1, 24%-ի[23]։ Արմատական փոփոխություններ են տեղի ունենում նաև նյութական արտադրության մեջ կիրառվող աշխատուժի կառուցվածքում։ Կտրուկ աճում է ինժեներատեխնիկական աշխատողների տե-

---

20 А. Ш. Ахмедуев, Материальное стимулирование технического прогресса в промышленности, М., 1978, с. 14.

21 Նույն տեղում։

22 «Экономическая энциклопедия. Политическая экономия», т. 3, с. 42.

23 «Народное хозяйство СССР 1922—1982 гг.», М., 1982, с. 55, 125; «Народное хозяйство СССР в 1982 г.», М., 1983, с. 35, 89.

սակարար կշիռը։ Այսպես, արդյունաբերա-արտադրական անձնակազմի կառուցվածքում այն 1940 թ. 7,8%-ից 1982 թ. աճել է մինչև 14, 3%-ի։ Այդ ընթացքում ինժեներատեխնիկական աշխատողների թիվն ավելացել 5,3 անգամ, մինչդեռ բանվորներինը՝ 3 անգամ, իսկ արդյունաբերա-արտադրական անձնակազմինը՝ 2,9 անգամ[24]։ Բացի այդ, արմատական փոփոխություններ են տեղի ունենում բանվորների աշխատանքային գործունեության մեջ։ ԳՏԱ-ի պայմաններում բարձրանում է նրանց պրոֆեսիոնալ որակավորման մակարդակը։ Աշխատանքային պրոցեսում սկսում են գերակշռել մտավոր և ստեղծագործական ֆունկցիաները։ Ուժեղանում է բանվորական աշխատանքի նշանակությունն արտադրության որակական պարամետրերի բարձրացման գործում։ Աշխատանքի բնույթի նման փոփոխությունը տեղի է ունենում աշխատանքի հասարակական բաժանման հետագա խորացման պայմաններում։ Յուրաքանչյուրի աշխատանքը հանդես է գալիս որպես մասնագիտացված ստեղծագործական աշխատանք։ Այս հանգամանքը զգալիորեն դժվարացնում է տվյալ տեսակի աշխատանքի հասարակական նշանակության գնահատումն ըստ արտադրության պայմանների։ Առաջանում է աշխատանքի գնահատման անհրաժեշտությունն՝ սպառման ոլորտում արդյունքի օգտագործման պայմաններով։ Դա նշանակում է, որ նյութական խթանման համակարգը պետք է հիմնվի ոչ թե աշխատանքով, այլ արդյունքով վճարման վրա։

Մյուս կողմից, ԳՏԱ-ն արմատական փոփոխություն է ենթարկում աշխատանքի և արտադրված արդյունքի որակը։ Վերջինս որպես սոցիալ-տնտեսական կատեգորիա այլևս չի կարող բնութագրվել ո՛չ իր սպառողական արժեքով, ոչ էլ արժեքով, քանի որ արժեքն արտահայտում է ոչ թե սպառարժեքը, առավել ևս որակական տարբերությունները վերջինիս սահմաններում, այլ հասարակականորեն անհրաժեշտ աշխատանքի ծախսումները և չի կարող հանդես գալ որպես այս կամ այն պահանջմունքի բավարարման ցուցանիշ։ Առաջ է գալիս սպառարժեքի և արժեքի միասնության անհրաժեշտություն։ Այս պայմաններում, մեր կարծիքով, անհրաժեշտ է խոսել ոչ թե աշխատանքի, այլ արդյունքի որակի մասին։ Նշված հանգամանքը պետք է արտահայտվի ժողովրդատնտեսական վերջնական արդյունքի մասին տարածված կոնցեպցիայում։ Նկատի ունենալով դա, Գ. Եղիազարյանն իրավացիորեն գրում է, որ «աշխատանքի որակը ոչ միայն աշխատանքային նպատակամղված ծախսումներն են, այլ նաև այդ ծախսումների արդյունքը՝ սպառարժեքը։ Դա նշանակում է, որ աշխատանքի որակը ճանաչվում է արդյունքի որակի միջոցով»[25]։

Այսպիսով, սոցիալիզմի օրոք ԳՏԱ-ն հոգևոր և նյութական պահանջմունքների բավարարմանն ուղղված սոցիալ-տնտեսական բարդ պրոցես է, որտեղ արտադրության արդյունավետության ու նյութատեխնիկական բազայի բարձրացման, ինչպես նաև հոգևոր ու նյութական բարիքների անմիջական ստեղծման գործում առաջատար դերը պատկանում է գիտությանը։ ԳՏԱ-ի պայմաններում հասարակական աշխատանքը արմատական փոփոխության է ենթարկվում՝ ձեռք բերելով ստեղծագործական բնույթ։ Այդ հանգամանքն է՛լ ավելի է ուժեղացնում ըստ արդյունքի վճարման համակարգի հետագա կատարելագործման և ընդլայնման անհրաժեշտությունը։

---

24 «Народное хозяйство СССР в 1982 г.», с. 124.

25 Г. А. Егиазарян, Материальное стимулирование за новую технику, М., 1964, с. 28.

ЭКОНОМИЧЕСКАЯ СУЩНОСТЬ НАУЧНО-ТЕХНИЧЕСКОГО ПРОГРЕССА

ГРАНТ БАГРАТЯН, АКОП МАРУТЯН, АШОТ САЛНАЗАРЯН

Резюме

Большинство ученых-экономистов НТП рассматривает как процесс реализации цикла «наука-техника-производство». Сущность этого процесса фактически представляется как создание и внедрение новой техники. Тем самым роль науки в НТП рассматривается лишь с точки зрения ее воздействия на сферу материального производства.

Однако при таком подходе упускается из виду воздействие науки на остальные сферы деятельности в обществе, не отмечается роль науки в непосредственном удовлетворении возрастающих духовных потребностей и, наконец, не учитываются коренные изменения, происходящие в характере совокупного труда, и в связи с этим возникающие новые требования к оценке и стимулированию результативности деятельности. НТП следует рассматривать как процесс, направленный на удовлетворение развивающихся духовных и материальных потребностей членов общества, где науке принадлежит ведущая роль в повышении материально-технической базы и эффективности производства, а также в непосредственном создании духовных и материальных благ. Изменения, происходящие в характере совокупного труда в эпоху НТП, показывают, что совокупный труд приобретает творческий характер. Это обстоятельство выдвигает необходимость нацеливать всю систему стимулирования на произведенный результат, поскольку традиционный механизм представления в единице произведенного результата определенного количества труда, вследствие ограниченности меры «рабочее время», недостаточен.